2022-2023 ուստարի

21.06 Արգելված է

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքի N2 հիմնական դպրոցի 8-րդ <<բ>> դասարանի ղեկավարի հաշվետվություն

Դասղեկ՝ Մ. Ջանջուղազյան

1.Ուսումնադաստիարակչական աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

- Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծվել ենբարենպաստ պայմաններ ,միջավայր,համապատասխան կահավորում:
- Ամրացրել ենք փոխհամագործակցությունը և փոխօգնությունը:
- Աշակերտների մեջ խորացրել ենք սերը ուսման,հայրենիքի,դպրոցի նկատմամբ:Սերմանել ենք աշխատասիրություն,պարտաճանաչություն,և պատասխանատվության զգացում ,բարեխիղճ և հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի,դասագրքերի նկատմամբ:
- Սովորեցրել ենք գնահատել սեփական արարքները,նկատել իրենց և ընկերների թերությունները,ժամանակին շտկել դրանք:
- Դաստիարակել ենք հարգանք մեծերի նկատմամբ,ուշադրություն՝ փոքրերի:
- Կարևորել ենք անձնական հիգիենան և մաքրասիրությունը:

2.Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

- Ծանոթացրել ենք սոցիալական ցանցերից անվտանգ օգտվելու կանոններին,նոր տեխնոլոգիաներին ավելի վարժ տիրապետելու ձևերին:
- Կանոնավոր հետևել ենք դասարանի աշակերտների առաջադիմությանը՝ հնարավորինս բարձրացնելով ուսման որակը,խորացնել նրանց գիտելիքները տարբեր առարկաներից:

- Խստորեն հսկել ենք աշակերտների օրագրերի գրանցումներին ,տնային հանձնարարությունների կատարմանը,վարքին, դպրոցական համազգեստին,հիգիենային:
- Ապահովել ենք աշակերտ- դասղեկ– ծնող կապը:
- Քաջալերել ենք աշակերտներին , խրախուսել ենք նրանց ձեռքբերումները և շտկել բացթողումները:
- Կազմակերպվել են ինքնազարգացման գործնական աշխատանքներ:
- Դասարանում ապահովվել է խաղաղ, դրական միջավայր:
- Կազմակերպվել են միջոցառումներ , էքսկուրսիաներ,զբոսանքներ:
- Ձևավորել ենք հայրենասեր,ազգանվեր,կրթված,ընկերասեր,անձնազոհ անհատներ՝ պատրաստ հաղթահարելու բոլոր խոչընդոտները և առաջ շարժվելու:
- Կատարվել են դասալսումներ, ստուգվել աշակերտների դասագրքերը,տետրերի առկայությունը,խնամքը:

3.Հայեցի դաստիարակություն.

▪Հոգևոր դաստիարակություն- Ձևավորել ենք բարոյական արժեքներ, որոնք պետք է դառնան աշակերտների հասունության և վարքի հիմքը: Օրինակ ենք բերել տարբեր սերունդների բարոյական փորձը, ուսումնասիրել ենք հանճարների կյանքը, գաղափարները, իրականացրել սեփական արարքների քննադատական վերլուծություն ու գնահատում հարցաթերթիկների , թեստերի միջոցով:

▪Գեղագիտական դաստիարակություն.- Աշակերտների մոտ ձևավորել ենք գեղեցիկի զգացում, ճաշակ , ծանոթացրել միջազգային արվեստագետների գործերին : Սերմանել ենք տարրական էթիկայի կանոնների հիմունքները , զարգացրել գեղեցիկը հասկանալու և գնահատելու կարողությունները զրույցների միջոցառումների միջոցով:

▪Ռազմահայրենասիրական դաստիարակություն.-Կազմակերպվել են արիության դասեր, հանդիպումներ զորամասի ծառայողների հետ, պարբերաբար անցկացվել են զրույցներ , հարցումներ և բանավեճեր հայրենասիրական արժեքների վերաբերյալ : Հաստատել ենք կապ գեղագիտական կերպարների , հերոսների և իրական կյանքի հետ:

▪Ֆիզիկական դաստիարակություն.-Բացահայտել ենք ժամանակակից տեխնոլոգիաների բացասական դերը դեռահասների ֆիզիկական զարգացման հարցում: Կազմակերպվել են արշավներ, բակային խաղեր, զբոսանքներ, խոսել ենք առողջ սննդի վերաբերյալ , վնասակար սովորությունների , հանգստի և աշխատանքի արդյունավետության մասին:

▪Բնապահպանական դաստիարակություն- Ձևավորել ենք շրջակա միջավայրի նկատմամբ մշտական խնամքի անհրաժեշտություն, հասկացրել, որ երկիրը մարդկության ընդհանուր տունն է, պատկերացում ենք տվել շրջակա միջավայրի, ջրի , օդի և այլն աղտոտման խնդիրների և դրանց լուծման եղանակների մասին:

4.Դպրոց-ընտանիք կապը

- ▪ Զարգացրել ենք դպրոց – ընտանիք կապը՝ ներգրավվելով ծնողներին դասարանի կյանքի և գործունեության մեջ: Հրավիրել ծնողներին դասարանական և դպրոցական միջոցառումներին: Լսել նրանց կարծիքը,առաջարկությունները:

• N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Կատարման ժամկետը
1	Դպրոց հաճախելու կանոններ՝ համապատասխան հագուստ,գրենական պիտույք,դասագրքերի խնամք;	դասղեկ	սեպտեմբեր
2	Կատարվել **են** լուրջ դաստիարակչական աշխատանքներ՝ ազգային ոգով դաստիարակելու, գեղագիտական ճաշակ զարգացնելու:	դասղեկ	տարվա ընթացքում
3	Հրավիրվել **են** ծնողական ժողովներ, որտեղ ներկայացվել են աշակերտների և ծնողների հետ կատարվելիք աշխատանքները:	դասղեկ, ծնողներ	ամիսը **2** անգամ
4	Աշխատանքներ **են տարվել** կարգապահական խնդիրներ ունեցող աշակերտների և նրանց ծնողների հետ:	դասղեկ, ծնողներ	յուրաքանչյուր ամիս
5	Այցելություններ են կատարվել թանգարաններ, ցուցահանդեսներ:	դասղեկ, աշակերտներ	տարվա ընթացքում
6	Համագործակցել **եմ** առարկայական ուսուցիչների հետ, քննարկել առաջադիմության հարցեր:	դասղեկ	տարվա ընթացքում
7	Ցուցաբերվել է օգնություն սոցիալապես անապահով երեխաներին:	դասղեկ, աշակերտներ,ծնողներ	տարվա ընթացքում
8	Հաճախակի կատարել **եմ** դասալսումներ:	դասղեկ	ամեն ամիս
9	Կազմակերպել եմ բաց դաս՝ «Շիրվանզադե» թեմայով:	դասղեկ, աշակերտներ	նոյեմբեր
10	Յուրաքանչյուր ամսվա վերջում ամփոփել **եմ** առաջադիմությունը և կարգապահությունը:	դասղեկ	յուրաքանչյուր ամիս

11.	Կազմակերպվել է միջոցառում՝ «Բայց մենք հավերժ ենք□□□» խորագիրը կրող	Դասղեկ,աշակերտներ	ապրիլ

12	Կազմակերպել եմ էքսկուրսիա դեպի Գյումրի:	դասղեկ, աշակերտներ,ծնողներ	հունիս

Կազմակերպել և անցկացվել են թեմատիկ դասղեկական հետևյալ ժամերը□

N	Թեման
1.	Առաջին զանգ:
2.	Անկախության հռչակում: ա/Զրույց՝ <<Անկախության 31-ամյակ>>, բ/զինվորական երդում՝ հրթիռահրետանային օրվան նվիրված
3.	Կարծրատիպեր և նախապաշարմունքներ:Կածրատիպերի առաջացման պատճառները:
4.	Ուսուցչի օր:
5.	Խտրականություն:Բուլինգ,ինչպե՞ս խուսափել բուլինգի ենթարկվելուց և օգնել ենթարկվողին:

6	Զրույց՝ <<Անձնական հիգիենայի կարևորությունը>>

7	Զրույց՝ <<ՁԻԱՀ և ՄԻԱՎ >>հիվանդություններից պաշտպանվելու օրվան նվիրված
8	<Հնարավորությունների հարթակ>> կոնֆերանսի մասնակցություն
9.	Ի նչ է խտրականությունը:
10.	Խտրականության տեսակները:
11.	Երկրաշարժ:Բնական աղետներ:
12.	Ուսումնական տագնապ
13.	Ամանորյա ձևավորում
14.	Ամանորյա միջոցառում-պարահանդես
15.	Բանակի օր: Զր.՝<<Հայոց բանակը 31 տարեկան է>>
16.	Սիրո տոն: Սիրո և հավատարմության մասին:
17.	Ազգային տոներ
18.	Պաստառների ձևավորում՝ նվիրված <<Մայրենիի օրվան>>
19.	Զրույց <<Կանանց միամսյակ>>
20.	Միջոցառում՝ նվիրված եղեռնի զոհերի հիշատակին
21.	Արցախյան հերոսամարտի ընթացքում ծնված երգերը: Մայիսյան տոներ:Իմ երկրի պատմության հերոսական էջերը:
22.	Իմ սիրած երգերը:
23.	Ինչպես հասնել հաջողության:
24.	Վատ և լավ սովորություններ:
25.	Շաբաթօրյակ
26.	Պահպանենք մեր շրջակա միջավայրը:
27.	Ինչպես պահպանել Երկիր մոլորակը:
28.	Վերջին զանգ: Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին:

2021-2022 ուստարվա կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքները

8-րդ <<բ>> դասարանը ուստարվա սկզբին բաղկացած էր 24 աշակերտից՝ 15 տղա, 9 աղջիկ: Տարվա ընթացքում 2 տղա և մեկ աղջիկ են ավելացել ՝ Մուրադյան Սյուզաննան,Այվազյան Արենը և Մուրադյան Վահագնը:Այսպիսով, ուսումնական տարվա ավարտին 8-րդ <<բ>>դասարանում սովորում է 27 աշակերտ՝ 17 տղա,10 աղջիկ:

Դասարանը կազմակերպված է, համախմբված, ակտիվ և պատասխանատու: Ունենք 2 ԿԱՊԿՈՒ աշակերտ՝ Մկրտչյան Տիգրանը և Այվազյան Արենը,3 զերազանցիկ՝ Նալբանդյան Իվետան,Ներկարարյան Մարիամը և Հակոբյան Ինեսան: Առաջավոր աշակերտները -ն են: Դասարանում հիմնականում տիրում է խաղաղ մթնոլորտ, չնայած երբեմն կան տարաձայնություններ, հակասություններ:

Սիրում են մասնակցել տարատեսակ միջոցառումների,մրցույթների: Մեպտեմբերին 8-րդ <<բ>> դասարանի մի շարք աշակերտներ մասնակցեցին <<Երեք սրբության զավակներ>> առցանց նախաձեռնությանը,ստացան հավաստագրեր:Կազմակերպվեց բաց դաս <<Շիրվանզադեի «Արտիստը » պատմվածքը >>թեմայով:

Փետրվարի 21-ին մասնակցեցին <<Մայրենիի օրվան>> և Հովհաննես Թումանյանի 153-ամյակին նվիրված, <<Եթե ես լինեի սուպեր հերոս□□□ >>շարադրությունների և պաստառների ճևավորման մրցույթներին:Ապրիլի 26-ին կազմակերպվեց «Բայց մենք հավերժ ենք□□□» խորագիրը կրող միջոցառում՝ Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օրվան նվիրված:

Աշակերտներից մի քանիսը լավ ասմունքում են,նկարում,երգում:Թաթոյան Արմանը, Թունյան Լիդիան,Չատինյան Էլենը առանձնանում են իրենց նկարելու տաղանդով:Լիդիան նաև տարատեսակ մուլտհերոսներ է պատրաստում,մասնակցում ցուցադրությունների: Վարդանյան Գրետան մասնակցել է խճուղավազքի մրցույթին:Այվազյան Մանվելը հաջողություններ է գրանցում շախմատի ասպարեզում:Դպրոցի բասկետբոլի հավաքականում ընդգրկված են Այվազյան Արենը,Խաչատրյան Տիգրանը,Այվազյան Սարգիսը,որոնց շնորհիվ էլ թիմը հաջողություններ է գրանցում:

Աշակերտական խորհրդի անդամներն են՝ Մանուկյան Էդմոնը,Մելիքսեթյան Էրիկը,Թունյան Լիդիան:Վերջինս ընտրվել է աշակենտական խորհրդի նախագահ:

8-րդ »բ» դասարանի ակտիվ աշակերտները մասնակցեցին նաև առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլին:

Հունիսի 7-ին կազմակերպվեց էքսկուրսիա դեպիԳյումրի:Այցելեցինք Ձիթողցոնց թանգարան,Շիրազի և Իսահակյանի տուն-թանգարանները, Սև բերդը և Գյումրիում գտնվող այլ տեսարժան վայրեր ու պատմամշակութային կոթողներ,եկեղեցիներ:Ուսումնական տարվա ընթացքում մասնակցել են բոլոր շաբաթօրյակներին,առանձնացել իրենց աշխատասիրությամբ և պատրաստակամությամբ:

Դասարանի առաջադիմությունը 100% է,որակը՝ 26 :